



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ուսանողական խորհուրդը (այսուհետև՝ Խորհուրդ) Համալսարանի ուսանողական ինքնակառավարման, սովորողներին (բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններով, ինչպես նաև առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողներին) միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմին է:
2. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ գործող օրենսդրությամբ, Համալսարանի Կանոնադրությամբ և սույն Կանոնադրությամբ համապատասխան:
3. Խորհուրդը համակարգում է ուսանողական ինքնակառավարման գործընթացները Համալսարանի սովորողների շրջանում, արտահայտում և պաշտպանում է նրանց շահերը, նպաստում անհատի համակողմանի զարգացմանը, ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակմանը, ստեղծում կապեր ՀՀ և արտերկրի բուհերի գիտական, կրթական, երիտասարդական, մշակութային և այլ կազմակերպությունների հետ:
4. Համալսարանի կառավարման մարմինների, նրանց ստորաբաժանումների, Համալսարանում գործող, ինչպես նաև արտահամալսարանական գիտական, կրթական, մշակութային, հոգևոր, բարեգործական և այլ կազմակերպությունների, պետական մարմինների և անհատ անձանց հետ Խորհրդի հարաբերություններն իրականացվում են Համալսարանի կանոնադրության, սույն Կանոնադրության և պայմանագրերի հիման վրա:
5. Խորհրդի կողմից կնքված պայմանագրերը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավական ուժ են ստանում Համալսարանի ռեկտորի կողմից վավերացվելուց և Համալսարանի կնիքով կնքվելուց հետո:
6. Խորհուրդն ունի իր խորհրդանշանը, որը հաստատվում է Խորհրդի ժողովի կողմից:

II. ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

7. Խորհրդի հիմնական նպատակն է ուսուցման կազմակերպման ու որակի ապահովման մեջ, Համալսարանի կյանքում սովորողների սոցիալական դերի և ակտիվության բարձրացումը, նրանց արդյունավետ գործունեությանը սատարումը, մասնագիտական, հոգևոր և ստեղծագործական զարգացմանը նպաստումը:
8. Խորհուրդն իր նպատակների իրականացման համար իր առջև դնում է հետևյալ խնդիրները.
 - 1) Աջակցություն ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսանողների առաջադիմության բարձրացման, հետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացներին:

- 2) Սովորողների շրջանում տեղեկատվության տարածում, պարբերականների հրատարակում:
 - 3) Սովորողների ստեղծագործական ներուժի բացահայտման համար պայմանների ստեղծում:
 - 4) Համալսարանի կառավարման մարմիններում սովորողների շահերի ներկայացում և պաշտպանություն:
 - 5) Քայլերի ձեռնարկում, որոնք կնպաստեն ուսանողների և դասախոսների շահերը և դիրքորոշումները մոտեցնելուն, նրանց փոխըմբռնմանը հասնելուն:
 - 6) Ուսումնական մասնաշենքերում կարգուկանոնի պահպանությանն աջակցություն:
 - 7) Սովորողների սոցիալական վիճակի և կենցաղի բարելավման համար պայմանների ստեղծում:
 - 8) Համալսարանի ուսանողական կառույցների աշխատանքի կոորդինացմանը նպաստող այլ միջոցառումների ձեռնարկում:
 - 9) Հանրապետության և արտասահմանյան երիտասարդական, ուսանողական կազմակերպությունների հետ կապերի ստեղծում և զարգացում: Միջհամալսարանական ուսանողական համագործակցության զարգացում, աջակցություն ուսանողների փոխանակմանը:
 - 10) Ուսուցման որակի բարձրացման և ծրագրային նորացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում և նպաստում դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը:
 - 11) Շրջանավարտների աշխատանքի տեղավորմանն աջակցություն:
 - 12) Համալսարանի շրջանավարտների և գործատուների միջև կապի պահպանում:
 - 13) Համալսարանում սովորողների ֆիզիկական դաստիարակության և մարզաձևերի զարգացմանն աջակցություն:
 - 14) Ուսանողական միջոցառումների անցկացում:
 - 15) Համակողմանի աջակցություն շնորհալի ուսանողների առաջընթացին:
9. Սահմանված նպատակներին հասնելու և առաջադրված խնդիրների լուծման համար էությունը իրավասու է.
- 1) Որոշելու իր կառուցվածքը:
 - 2) Կազմակերպելու համատեղ աշխատանք պետական և հասարակական կազմակերպությունների հետ և մասնակցելու դրանց՝ իր ներկայացուցիչ պատվիրակների միջոցով:
 - 3) Մշակելու նախագծեր՝ երիտասարդական հիմնադրամից և այլ արտաքին ֆինանսական աղբյուրներից դրամաշնորհներ ստանալու համար:
 - 4) Մշակելու և իրականացնելու միջոցառումներ ուսանողների՝ Համալսարանի կանոնադրությամբ նախատեսված իրավունքների պաշտպանության համար:
 - 5) Օգտագործելու Համալսարանի տեղեկատվական հնարավորությունները՝ ուսանողական կյանքը համակողմանիորեն լուսաբանելու և էությունը որոշումներն օպերատիվ կերպով ուսանողությանը հասցնելու համար:
 - 6) Ստեղծելու Համալսարանի կանոնադրությամբ չբացառվող ուսանողական, մշակութային, մարզական միություններ, ըստ նախասիրությունների՝ ակունքներ, կազմակերպելու ուսանողական օլիմպիադաներ, գիտաժողովներ, փառատոներ, համերգներ, հանդեսներ և ուսանողական առօրյան հետաքրքիր դարձնող այլ միջոցառումներ:

- 7) Մասնակցելու ուսանողների շահերին առնչվող ակտերի մշակմանը, կատարելագործմանն ու ընդունմանը:
- 8) Համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնելու ուսանողության հիմնահարցերը:
- 9) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Համալսարանի կանոնադրության համաձայն ունենալու սովորողների ներկայացուցիչներ Համալսարանի կառավարման մարմիններում՝ ապահովելով ուսանողների մասնակցությունը Համալսարանի (ֆակուլտետների, բաժինների) գործունեությանը վերաբերող կարևոր հարցերի լուծմանը:
- 10) Մասնակցելու սովորողների կրթաթոշակների նշանակման, սոցիալական օգնության, արտաուսումնական միջոցառումների ծրագրման գործընթացներին:
- 11) Առաջարկություններ ներկայացնելու՝ հիմնելու ներհամալսարանական նշանակության անվանական կրթաթոշակներ և մրցանակներ:
- 12) Մասնակցելու սովորողների ակադեմիական առաջադիմության և կարգապահական հարցերի քննարկման և որոշումների կայացման գործընթացներին:
- 13) Ընդգրկվելու սովորողների ուսուցմանը, կենցաղի և հանգստի կազմակերպմանը վերաբերող հարցերի մշակմանը, քննարկմանն ու որոշումների ընդունմանը:
- 14) Միջնորդելու Համալսարանի ղեկավարությանը՝ զեղչելու սոցիալապես անապահով ընտանիքների, ուսման բարձր առաջադիմություն, օրինակելի վարք ունեցող ուսանողների ուսման վարձը:
- 15) Միջնորդելու Համալսարանի հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունեցող ուսանողների պարզևատրման համար:
- 16) Առաջադրված խնդիրների լուծման համար խորհրդի կազմը համալրելու նոր անդամներով:
- 17) Սահմանված կարգով բողոքարկելու սովորողներին վերաբերող համալսարանական հրամաններն ու կարգադրությունները:
- 18) Իր իրավասության շրջանակներում լուծելու այլ հարցեր:

III. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

10. Խորհուրդը ձևավորվում է Համալսարանի ֆակուլտետների ներկայացուցիչների ընտրության սկզբունքով: Խորհրդի լիազորությունների ժամկետը 2 տարի է, որի ընթացքում կարող է տեղի ունենալ խորհրդի անդամների մասնակի շրջափոխություն՝ անդամների Համալսարանն ավարտելու և ուսանողների նոր հոսքի ընդունելության հետ կապված: Խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել Համալսարանի սովորողների ընդհանուր թվի 1%-ը: Ի պաշտոնե Խորհրդի անդամներ են Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդների խորհրդի նախագահները:

11. Խորհրդի ղեկավար մարմիններն են՝

- 1) Խորհրդի ժողովը,
- 2) նախագահությունը,
- 3) նախագահը:

12. Մշտական գործող կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

- 1) հանձնաժողովները,

2) Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդները:

13. Խորհրդի ժողովը գործում է հետևյալ կարգով.

- 1) Խորհրդի ժողովները գումարվում են կիսամյակը 2 անգամ: Արտահերթ ժողովներ հրավիրվում են Խորհրդի նախագահի, նախագահության կամ Խորհրդի անդամների առնվազն 1/3-ի պահանջով:
- 2) Խորհրդի ժողովները համարվում են իրավազոր՝ Խորհրդի անդամների առնվազն 2/3-ի մասնակցության դեպքում: Խորհրդի որոշումներն ընդունվում են ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Խորհուրդն այդ մասին այլ որոշում չի ընդունում:
- 3) Ընդունում է Խորհրդի կանոնադրությունը և նրանում կատարում փոփոխություններ, որոնք այնուհետև հաստատվում են Համալսարանի ռեկտորի կողմից:
- 4) Սահմանված կարգի համաձայն՝ առաջադրում է ուսանողական համակազմից Համալսարանի Խորհրդի անդամության թեկնածուներ:
- 5) Ընտրում է Խորհրդի նախագահություն:
- 6) Հաստատում է Խորհրդի գործունեության տարեկան աշխատանքային պլանը, Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդների աշխատակարգերը:
- 7) Լսում և քննարկում է Խորհրդի նախագահի, հանձնաժողովների, Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդների հաշվետվությունները:
- 8) Լսում և քննարկում է նախագահության, հանձնաժողովների, Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդների կողմից ներկայացվող հարցերը:
- 9) Հաստատում է Խորհրդի աշխատակարգը:
- 10) Հաստատում կամ չեղյալ է համարում Խորհրդի անունից կնքված պայմանագրերն ու մյուս փաստաթղթերը և սահմանված կարգով ներկայացնում Համալսարանի ռեկտորի վավերացմանը:
- 11) Քննարկում է այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ:

14. Խորհրդի ժողովների միջև ընկած ժամանակահատվածում Խորհրդի մշտական գործող կուլեգիալ ղեկավար մարմինը Խորհրդի ժողովում փակ գաղտնի քվեարկությամբ ընտրված նախագահությունն է: Նախագահության ի պաշտոնե անդամներ են Խորհրդի նախագահը, Համալսարանի ֆակուլտետների ուսխորհուրդների նախագահները: Նախագահության մնացած անդամները ընտրվում են ժողովի անդամներից, Խորհրդի ժողովում: Նախագահության անդամը համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել են Խորհրդի ներկա անդամների կեսից ավելին: Նախագահության անդամների թիվը չի կարող գերազանցել 13-ը:

15. Նախագահությունն իր նիստերը, որպես կանոն, գումարում է շաբաթը մեկ անգամ: Նախագահության արտահերթ նիստերը հրավիրվում են նախագահի կամ նախագահության առնվազն հինգ անդամի գրավոր առաջարկությամբ: Նախագահության նիստը համարվում է իրավազոր, եթե նիստին մասնակցում են նախագահության անդամների առնվազն 2/3-ը:

16. Խորհրդի նախագահությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

- 1) Պատրաստում է Խորհրդի ժողովների քննարկմանը ներկայացվող հարցեր և կազմակերպում Խորհրդի ժողովների որոշումների իրականացումը.
- 2) Որոշում է Խորհրդի ժողովի անցկացման օրը և հաստատում օրակարգը.
- 3) Խորհուրդը համալրում է նոր անդամներով.
- 4) Սահմանված կարգով մշակում, քննարկում և ընդունում է Խորհրդի գործունեության տարեկան աշխատանքային պլանը, Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդների աշխատակարգերը:

- 5) Նախագահությունը լուծում է ընթացիկ հարցեր, կոնկրետ հանձնարարականներով կոորդինացնում է Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդների գործունեությունը:
 - 6) Իրականացնում է այլ գործառույթներ՝ հաստատված սույն Կանոնադրությամբ և Խորհրդի որոշմամբ:
 - 7) Ընտրում է Խորհրդի նախագահ 2 տարի ժամկետով:
 - 8) Խորհրդի նախագահ կարող է ընտրվել Խորհրդի անդամ հանդիսացող Համալսարանի ուրաքանչյուր սովորող:
 - 9) Խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է Խորհրդի ժողովում փակ, գաղտնի քվեարկությամբ: Նախագահի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է Խորհրդի ներկա անդամների կեսից ավելին:
17. Խորհրդի նախագահն իրականացնում է հետևյալ գործառույթները.
- 1) Ղեկավարում է ուսանողական խորհուրդը և կազմակերպում Խորհրդի աշխատանքը.
 - 2) Գլխավորում է Խորհրդի նախագահությունը.
 - 3) Բաշխում է պարտականությունները հանձնաժողովների ղեկավարների միջև.
 - 4) Ներկայացնում է Խորհուրդը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական կազմակերպություններում, զանգվածային լրատվության միջոցներում.
 - 5) Նախագահության հաստատմանն է ներկայացնում Խորհրդի գործունեության ծրագիրը.
 - 6) Իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին և ռեկտորատին.
 - 7) Իր բացակայության ժամանակ նախագահի պարտականությունների կատարումը վերապահում է Խորհրդի փոխնախագահին.
 - 8) Իրականացնում է սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ.
 - 9) Նախագահը չի կարող ընտրվել՝ 2 անգամ երկամյա անընդմեջ ժամկետից ավելի:
18. Խորհրդի փոխնախագահի թեկնածությունն առաջադրվում է նախագահության անդամներից, նախագահի կողմից և հաստատվում նախագահության նիստում:
19. Խորհրդի փոխնախագահը մասնակցում է Խորհրդի աշխատանքների ղեկավարմանը, կոորդինացնում է Համալսարանի ֆակուլտետների ուսխորհուրդների աշխատանքները, հետևում է Խորհրդի ընդունած որոշումների կատարմանը, համակարգում է հանձնաժողովների աշխատանքը, կատարում է Խորհրդի նախագահի հանձնարարականները:
20. Խորհրդի քարտուղարի թեկնածությունն առաջադրվում է նախագահության անդամներից, նախագահի կողմից և հաստատվում նախագահության նիստում:
21. Խորհրդի քարտուղարը կազմակերպում է Խորհրդի գործավարությունը, տնօրինում է արխիվը, կատարում կազմակերպական աշխատանքներ:
22. Խորհուրդն իր գործունեության հիմնական ուղղությունների իրականացման նպատակով ձևավորում է հետևյալ հանձնաժողովները՝
- 1) ուսումնագիտական,
 - 2) մշակութային,
 - 3) մարզական,
 - 4) հայրենասիրական,

5) շրջանավարտների հետ կապի,

6) տեղեկատվական և այլն:

23. Խորհրդի հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել նաև Խորհրդի անդամ չհանդիսացող ուսանողներ:

24. Հանձնաժողովի նախագահների թեկնածություններն առաջադրվում են Խորհրդի նախագահի կողմից և հաստատվում նախագահության նիստում:

25. Հանձնաժողովի նախագահներն իրականացնում են հետևյալ գործառույթները.

- 1) Իրականացնում են կոնկրետ ոլորտների հանձնաժողովների ղեկավարությունը.
- 2) Իրենց ղեկավարած հանձնաժողովների կազմերը լրացնելու համար նախագահության հաստատմանն են ներկայացնում համապատասխան թեկնածություններ.
- 3) Ընթացիկ ժամանակահատվածի համար կազմում են հանձնաժողովների աշխատանքային պլանները.
- 4) Համագործակցում են Համալսարանի ղեկավարության հետ՝ հանձնաժողովների գործունեությանը վերաբերող մասով.
- 5) Նախագահի հանձնարարությամբ կարող են ներկայացնել Խորհուրդը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական կազմակերպություններում, զանգվածային լրատվության միջոցներում.
- 6) Հաշվետվություն են ներկայացնում հանձնաժողովների աշխատանքի վերաբերյալ նախագահությանը, Խորհրդին:

26. Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդները ձևավորվում են համապատասխան ֆակուլտետի ուսանողներից՝ ընտրովի ներկայացուցչական սկզբունքով:

27. Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդների նախագահի և նախագահության ընտրությունների անցկացումը կարգավորվում է Խորհրդի նախագահության կողմից հաստատված՝ ընտրությունների անցկացման կարգով:

28. Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդների նախագահի անբավարար աշխատանքի, պարտականությունների թերի կատարման դեպքում, սահմանված կարգի համաձայն, Խորհրդի նախագահության կողմից վերջինիս կարող է հայտնվել անվստահություն, որից հետո երկշաբաթյա ժամկետում ընտրվում է նոր նախագահ:

29. Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդներն իրականացնում են հետևյալ գործառույթները.

- 1) Սահմանված կարգի համաձայն առաջադրում են Համալսարանի ուսանողական համակազմից համալսարանի Խորհրդի անդամության թեկնածություն:
- 2) Սահմանված կարգի համաձայն՝ ներկայացնում են անդամներ Համալսարանի ֆակուլտետների ժողովների կազմում:
- 3) Սահմանված կարգի համաձայն առաջադրում են ներկայացուցիչներ Համալսարանի Ուսանողական Խորհրդի ժողովում:
- 4) Վերահսկում և կազմակերպում են ուսանողների իրավունքների և պարտականությունների պատշաճ կատարումը:
- 5) Կենսագործում են Խորհրդի և նախագահության որոշումները:
- 6) Մշտական կապ են պահպանում ղեկանատների և կուրսղեկների հետ, մասնակցում են ղեկանատների կողմից կազմակերպվող աշխատանքների իրականացմանը, աշխատանքային հարցերի քննարկմանը:

- 7) Կիսամյակը մեկ անգամ կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Խորհրդին կամ նախագահությանը:
- 8) Իրենց իրավասությունների շրջանակներում լուծում են այլ հարցեր:

IV. ԽՈՐՀՐԴԻ ԱՆՊԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

30. Խորհրդի անդամներն իրավունք ունեն.

- 1) Ընտրել և ընտրվել Խորհրդի ղեկավար մարմիններում,
- 2) Սույն Կանոնակարգի համաձայն մասնակցել Խորհրդի կառավարմանը,
- 3) Մասնակցել Խորհրդի կողմից անցկացվող միջոցառումներին,
- 4) Խորհրդի ղեկավար կառույցներին ներկայացնել նրա գործունեության վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ,
- 5) Ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն Խորհրդի աշխատանքի վերաբերյալ,
- 6) Դուրս գալ Խորհրդի կազմից՝ նախագահությանը ներկայացվող գրավոր դիմումի համաձայն:

31. Խորհրդի անդամները պարտավոր են.

- 1) Օժանդակել Խորհրդի հեղինակության ամրապնդմանը, գործունեության արդյունավետության բարձրացմանը,
- 2) Ակտիվ մասնակցություն ցուցաբերել Խորհրդի կողմից անցկացվող միջոցառումների ծրագրերի մշակմանը և դրանց կենսագործմանը,
- 3) Կատարել Խորհրդի ղեկավար մարմինների որոշումները,
- 4) Կատարել ստանձնած պարտավորությունները,
- 5) Խուսափել գործողություններից, որոնք կարող են վնասել Խորհրդի կամ նրա անդամների հեղինակությանը:
- 6) Հետևել սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականությունների կատարմանը,

32. Խորհրդի անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել հետևյալ դեպքերում.

- 1) Նախագահության որոշմամբ՝ ժողովներից պարբերաբար բացակայելու, Խորհրդի աշխատանքից խուսափելու, որոշումները չկատարելու, կարգապահական խախտումների և Համալսարանի կանոնադրությամբ սահմանված՝ ուսանողի պարտականությունները չկատարելու դեպքերում:
- 2) Համալսարանի ֆակուլտետների Խորհրդի կողմից անվստահություն հայտնվելու դեպքում՝ նույն Խորհրդի ժողովի որոշմամբ.
- 3) Ուսումնառությունն ավարտելուց հետո.
- 4) Համալսարանից հեռացվելու կամ ազատվելու դեպքում.
- 5) Համալսարանին բարոյական կամ նյութական վնաս պատճառելու դեպքում.
- 6) Անձնական դիմումի համաձայն:
- 7) Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման մասին որոշումը ընդունում է Խորհրդի նախագահությունը:

V. ԽՈՐՀՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

33. Խորհուրդն անվճար օգտվում է Համալսարանի տարածքային, գույքային միջոցներից և նյութատեխնիկական սպասարկումից:

34. Խորհրդի հիմնական ֆինանսական միջոցները գոյանում են Համալսարանի հատկացումներից:
35. Խորհրդի ֆինանսական միջոցները կարող են գոյանալ նաև հանգանակություններից, նվիրատվություններից և Համալսարանի Կանոնադրությամբ, սույն Կանոնադրությամբ չհակասող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
36. Խորհրդի նյութական և ֆինանսական միջոցները տնօրինում են Խորհրդի նախագահը կամ նրա կողմից լիազորված անձինք: Ֆինանսական ծախսերը իրականացվում են Խորհրդի նախագահության որոշմամբ, որոնց մասին Խորհրդի նախագահը հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին և ռեկտորատին:

VI. ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ.

37. Խորհուրդը լուծարվում և վերակազմավորվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, ինչպես նաև Խորհրդի անդամների 2/3-ի որոշմամբ:
38. Լուծարման կապակցությամբ ստեղծվում է լուծարքային հանձնաժողով, որը կազմում է վերջնահաշիվ: Լուծարված Խորհրդի գույքը և միջոցները համարվում են Համալսարանի սեփականությունը: